№ 243 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 № 243

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(32-Դ ՏԱՐԻ)
ԱՌԱՋԻԿԱՅ **1904** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՈԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն),

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դրական գործունէութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց դրամատիկական ընկերութիւնը. Մատենագրութիւն. Հայոց ներկայացումները. Ղրիմի ափերից. Նամակ Շուլաւերից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մենք սողում ենք։

ԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցները մեզ հաղորդում են, որ մեր գաւառներում ազգաբնակութիւնը մի քանի տեղերում միտք է յղացել մի շարք միջոցներով ժուժկալութիւն մտցնել կենցաղավարութեան մէջ, զգուշանալու օղիի և ուրիշ ոգելից ըմպելիքների չափազանց գործածութիւնից, հալածելու թղթախաղը և ուրիշ վտանգաւոր խաղեր, զսպելու շռայլ ծախքերը և աշխատելու մաքրութիւն պահպանել կեանքի զանազան գործառնութիւնների մէջ։

Դա մխիթարական երեւոյթ է, որ արժանի է քաջալերութեան։ Ոգելից ըմպելիքները, թղթախաղը, շռայլութիւնը շատ քայքայիչ ներգործութիւն են ունեցել ոչ միայն առանձին գիւղերի, այլ խոշոր համայնքների և նոյն իսկ ամբողջ նահանգների համար։ Ուրիշ երկիրներում հիմնված են ժուժկալական յատուկ ընկերութիւններ, որոնք որոշ յաջողութեամբ աշխատում են ազատել ժողովրդին վտանգաւոր և քայքայիչ ախտերից։ Բայց այդ ընկերութիւնները չեն զբաղված միայն արգելքներ սահմանելով, միայն խրատներ տալով. Նրանք իրանց ծրագրի մէջ մեծ տեղ են տալիս դրական գործունէութեան։

Այդ դրական գործունէութիւնը ոչ միայն կարեւոր մի հանգամանք է, այլ և անհրաժեշտ մի պայման գործի աջողութեան համար, որովհետեւ միայն արգելքներ դնելով չէ կարելի զսպել մարդկանց։ Մարդիկ ուզում են զուարճանալ, ժամանակ անցկացնել ծանօթների շրջաններում, մտքի փոխանակութիւն ունենալ։ Եթէ դուք կարգելէք այն, ինչ որ նրան զուարճացնում և մխիթարում էր, նա դրա փոխարէն ուրիշ միջոցի կը դիմէ և գաղտնի կերպով կիրագործէ այն, ինչ որ նրա համար անկարելի է անել հրապարակով։

Ուստի անհրաժեշտ է ժողովրդի ձեռքը տալ դրական խելացի զուարճութիւններ և դրանցով խեղդել և արմատահան անել ախտերը։ Տուէք ժողովրդին գիրք, կենդանի խօսք, թատրոնական ներկայացում, կրթական երեկոյթներ. օղետան փոխարէն բաց արէք թէյարան՝ ընթերցանութեան պարագաներով, որպէս զի նա կարողանայ գոհացում տալ իր հոգեկան պահանջներին։

Մենք անհրաժեշտ ենք համարում ուշադրութիւն դարձնել մի հանգամանքի վրա. մեր գիւղական շրջաններում շռայլութեան վերաբերութեամբ հասկացողութիւնները շատ տարբեր և խառնուած են։ Կան տեղեր, ուր փոքր ի շատէ վայելուչ հագնվելը, մաքուր, չը պատառոտած շոր ունենալը արդէն շռայլութիւն է համարվում գիւղում։ Դա սխալ հասկացողութիւն է։ Մեր գիւղական դասակարգը լաւ կանէր, եթէ այդ կէտում թոյլ տար իրան աւելի ազատամտութիւն, քան ցոյց է տուել մինչեւ այժմ։ Ժամանակն է, որ մեր գիւղացիները թողնեն ցնցոտիներ հագնելը։ Մենք չենք խօսում այն ցնցոտիների մասին, որոնք արդիւնք են վերին աստիճանի չքաւորութեան։ Այդտեղ աղքատութիւնն է խօսում։ Բայց գիւղական համայնքում շատ շատերը, որոնք հնարաւորութիւն ունեն մաքուր և վայելուչ հագնվելու, այդ չեն անում թէ տնտեսական դիտումներով և թէ սովորութեան ճնշման տակ։ Դա յամենայն դէպս լաւ սովորութիւն չէ։ Պէտք է աշխատել կարելին չափ հասարակ, համեստ, բայց վայելուչ և մաքուր հագնվել։ Այդտեղ շռայլութեան հարց չէ, այլ վայելչութեան և մաքրութեան։

Այդ հարցին մենք կը վերադառնանք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Հայոց դրամատիկական ընկերութիւնը հրատարակել է իր գործունէութեան տեղեկագիրը 1902—1903 տարեշրջանի համար։ Այդ շրջանում նա տուել է 34 ներկայացում և ստացել է այդ ներկայացումներից մուտք 15095 րուբլի 78 կոպէկ. միջին թւով ամեն մի ներկայացում տուել է 444 րուբլի։ Ծախք ունեցել է 20971 րուբլի 19 կ., ուրեմն դէֆիցիտ ունեցել է 5875 ր. 41 կ. կամ ամեն մի ներկայացման համար դէֆիցիտ ստացվել է 172 րուբլի, որովհետեւ ամեն մի ներկայացում միջին թւով տուել է 617 րուբլի։ Դէֆիցիտ 5875 ր. ծածկվել է թէ անդամակցական վճարներով, թէ դրամագլխի տոկոսներով և թէ մի առանձին ներկայացումով, որ յատկապէս տրվել է այդ նպատակով։

Ընկերութիւնը ունեցել է 136 իսկական և 37 մշտական անդամ, որոնցից ստացվել է 3900 րուբլի։ Բացի դրանից եղել են զանազան մուտքեր—տոկոսիք և այլն՝ 340 րուբլի և դէֆիցիտը ծածկելու համար տրված ներկայացումից 1089 րուբլի, ընդամենը ընկերութիւնը ստացել է թէ 34 ներկայացումներից, թէ միւս աղբիւրներից՝ 20,442 ր. 40 կ., իսկ ծախք—21722 ր. 95 կ., ուրեմն վերջնական դէֆիցիտ եղել է 1280 ր. 55 կ., որ ծածկվել է անձեռնմխելի գումարից, երեւի, փոխարինաբար։ Անձեռնմխելի գումարներ եղել են հետեւեալները 1) նախկին «Ակումբից» ստացած—3248 ր. 10 կ., 2) Գ. Սունդուկեանից—1418 ր. 96 կ. 3) հանգուցեալ տիկին Մակարեանից—3000 ր., ընդամենը 7667 րուբլի 6 կոպէկ։

Այս տեղեկագիրը ցոյց է տալիս, որ թէեւ ընկերութիւնը չէ կարողացել փակել իր հաշիւները առանց դէֆիցիտի, բայց թատրոնական գործը նա դրել է հաստատ հողի և հիմունքի վրա և այժմ մնում է, որ հասարակութիւնը իր նիւթական և բարոյական աջակ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՆՔ ՍՈՂՈՒՄ ԵՆՔ

Բժիշկը գիրքը փակեց և վերկացաւ. ժամի հինգն էր՝ հիւանդներ ընդունելու ժամանակը։

Գոհ ու երջանիկ՝ նա սկսեց հանդարտութեամբ գնալ-գալ իր առանձնասենեակում. քայլուածքը, շարժումները գեղեցիկ էին և ինքնավստահ։ Երեւում էր, որ նա դեռ կարդացած գրքի ազդեցութեան տակ է. մտախոհ չէր, այլ երազուն։ Դէմքն արտայայտում էր այն երջանիկ տրամադրութիւններից մէկը, երբ մարդ մտածում է հաճելի բաների մասին, բայց ուղեղը չէ աշխատում. միտքը չէ տանջվում, երեւակայութիւնն է միայն, որ իրար ետեւից քաշում, բերում է մէկը մէկից սիրուն պատկերներ՝ որպէս գոյնզգոյն թիթեռների մի խայտաբղէտ, աննպատակ երամ և խաղում է նրանց հետ, ինչպէս երեխան կը խաղար արեւի շողերի հետ։

Եւ այդ պատկերները... անձնական երջանկութեան, իր փոքրիկ, գծուած եսի շուրջը դարձող երեւոյթներ չէին, նրանք գալիս էին հեռուից, այնքան հեռու, որքան կարող է թափանցել մի վառ երեւակայութիւն անյայտութեան մշուշի մէջ։ Բժշկի մէջ այդ ժամին խօսում էր հաւատը դէպի տառապող մարդկութեան ճակատագրի փոփոխութիւնը, նա երազում էր այն երջանիկ ժամանակները, երբ գիտութիւնը կը ջնջէ ցաւն աշխարհից. երբ իւրաքանչիւր թարմ հողաթումբ էլ չի ներկայանայ որպէս մարդկային մտքի անզօրութեան և ամենակարող մահվան յաղթանակի մի արտասուելի կոթող։

Նա միշտ հաւատացել էր գիտութեան յաղթական զօրութեանը. այդ հաւատը նրա բնաւորութեան մէջ էր, խառնուածքի մի մասն էր, մի տեսակ բնազդ էր, անընկճելի ու գեղեցիկ, որ առանձին փայլ ու յանդգնութիւն էր տալիս նրա բժշկական գործունէութեանը, անդամահատական շատ անգամ վտանգաւոր գործողութիւններին։ Եւ այդ ժամերին իր դանակի տակ գալարվող ու ցնցվող միսը նա չէր տեսնում, իր բոլոր աշխատանքը, մտահոգութիւնը կարծես անմիջական զոհի ցաւերը մեղմելու համար չէին, այլ մի ուրիշ, աներեւոյթ էակի, այն զարմանալի հսկայի, որի անունն է ցաւագար մարդկութիւն։ Անհատն ինչ արժէ, երբ տեսակը պէտք է փրկել։ Եւ այդ անհատները դաժան իրականութեան մէջ մեծ գաղափարի ճանապարհի վրա զոհուածներ էին միայն. բժիշկը հեռուն էր տեսնում, չափազանց հեռուն. նա մի զօրապետ էր, որ քայլում էր դիակների վրայից դէպի յաղթութիւն։ Ահա թէ ինչու նա երբէք չէր ճանաչում իր դանակի տակից անցած հիւանդներին։ Եւ ինչ հրճուանքով էր գործի կպնում ամեն անգամ, երբ նրան ներկայացնում էին մի հետաքրքիր հիւանդ, ախտաբանական մի առանձին նմուշ, որ կարծես գիտութեան սիրուն՝ կեանքը գնում էր նրա առաջ և ասում՝ «ա՛ռ, կտրի՛ր, նայի՛ր և թող ապագայ մարդկութիւնը, երջանիկ լինի»։

«Եւ կը լինի, կը լինի», մրմնջում էր բժիշկն այժմ անցուդարձ անելով իր սենեակում, «յաղթանակը մերն է», աւելացնում էր նա չփելով ձեռները։

Նոյնն էր ասում նաեւ սեղանի վրա ընկած այն հաստ գիրքը, որ իր մեծութեամբ և պարունակութեամբ իշխում էր իր շուրջը թափթփած բոլոր միւս տետրակների վրա, և որի լեզուն միայն ինքն էր հասկանում, ինքը՝ բժիշկը։ Նոյնն էին ասում և այն բաց, վառ ճակատները, այն խորաթափանց աչքերը, որոնք հինաւուրց աստուածների խորհրդաւոր, ճնշող լռութեամբ պատերի վրայից այժմ խօսում էին մտքի երկու հազար տարվայ պատմութիւնից։ [illegible] էին... Ամպեդոկլից մինչեւ Պաստոր, չընդհատ գլուխներ...

«Իմ վարդապետները, իմ քրիստոսները»—շըշնջաց բժիշկը, աչք ածելով պատերին և մեքենայաբար մօտեցաւ, մէկիկ մէկիկ նայում էր նրանցից իւրաքանչիւրին և կարծես ճգնում էր նրանց ճակատների վրա, աչքերի մէջ կարդալ այն, ինչ չեն կարողացել ասել այդ փրկաբար շրթունքները։

Եւ դրսում, փողոցում կեանքը, ինչպէս միշտ՝ եռում էր իր ամենօրեայ թափով։ Մարդիկ գնում, գալիս էին, աշխատում, տքնում, իւրաքանչիւրը հնազանդ իր ճակատագրին։ Բըժիշկը թողեց իր երազներն ու իր քրիստոսներին և մօտեցաւ լուսամուտին։ Նրա դէմ ու դէմ՝ փողոցի հակառակ կողմում մի տուն էր շինվում, և այնտեղ աշխատում էին բազմաթիւ բանւորներ։ Նրանցից մի քանիսը մի հաստ գերան ուսերին՝ տնքալով բարձրանում էին ժամանակաւոր սանդուղներից, ուրիշները յամրաբար և հեւալով աղիւսներ կամ կիր էին վերհանում, ոմանք աշխատում էին պատերի վրա կռացած, ոմանք շինութեան ճակատից կախված, իսկ մի քանիսն էլ խոնաւ գետնի վրա նստած՝ միակերպ հարուածներով քարեր էին կոփում՝ թը՛րխկ, թը՛րխկ, թը՛րխկ...

«Ե՞րբ կը վերջանայ այս անիծված շէնքը» մռմռաց բժիշկը սրտնեղութեամբ։ Այդ աղմուկը, որ սկսվում էր ամեն օր առաւօտեան ժամի վեցին և վերջանում ուշ երեկոյեան, նրան սաստիկ ձանձրացնում էր ու զայրացնում։ Եւ եթէ բժիշկը երբեմն նայում էր դիմացի շինուող տանը, այդ միայն իմանալու համար, թէ որքան է առաջ գնացել շինութիւնը։ Այլապէս նա չէր սիրում տեսնել այդ բիրտ իրականութիւնը, այդ գալարված թիկունքները, այդ սեւացած, մազոտ բազուկները, այդ անյոյզ, տանջած, ընկճված դէմքերը։ Պատկերը վհատեցուցիչ էր ու տգեղ, նա ոչինչ չէր ասում իր մեծ գաղափարին ու հաւատին։ Ամենօրեայ բիրտ կեանքի անխուսափելի զարշութիւնն է այն, որ քայքայվում, լուծվում է իր սեփական քրտինքի մէջ և անցնում անհետ, ցութիւնը չը զլանայ, որ հայոց թատրոնական գործը կազմակերպուի վերջնականապէս և տեւական գոյութիւն ունենայ։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Աբգար Աւագ քահանայ Տէր-Յարութիւնեանց.—Հայ գաղթականները Բագու և նրանց վերադարձը.—Բագու 1903 թ. գինն է 60 կոպէկ։

Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կողմից, հայ գաղթականներին մինչև իրանց հայրենիքը ուղեկցելու համար պատուիրակ կարգված՝ Աբգար Աւագ քահանայ Տէր-Յարութիւնեանց՝ իր յիշեալ գործով պատմում է 1896 թւին գաղթականների Բագու ժամանումը, նրանց հայ հասարակութեան կողմից գտած ընդունելութիւնը և դէպի երկիր ճանապարհորդութիւնը։

Պատմութիւնը թէև հին է, բայց 122 երեսներից բաղկացած այս գիրքը կարդացվում է հետաքրքրութեամբ։

Տէր հայրը շատ արտասուշ ձևով նկարագրում է մանաւանդ Բագուի հայ կանանց ցոյց տուած հոգածութիւնը դէպի որբերը ու կրակից փախած իրանց եղբայրներն և քոյրերը։ Լարված ուշադրութեամբ կարդացվում է նոյնպէս ռուս-թիւրքական սահմանից անցքը, Բայազետի Վալիի հետ կատարված բանակցութեան պատմութիւնը։

Պատուիրակ քահանան իրան յանձնված խըղճալի հօտը պէտք է հասցնէր մինչև Վան։ Բայց առաջ հանված արգելքի պատճառաւ ետ է դառնում Բայազետից։

«Սակայն հեռանալու օրը Նազըմ բէյի մօտ, նախաճաշի ժամանակ Բաքիր աղան յայտնեց, որ իբր թէ ինքը տեղեկութիւն ունի, թէ ինձ հազիւ թողնեն ժողովրդին առաջնորդելու մինչև Վան։ Սիրտս արտփաց, հոգարաւոր մտքեր կայծակի արագութեամբ պաշարեցին ինձ։—Ժողովուրդը թողնել անտէր, Վեհափառ Հայրապետի հրամանին անկատար, հայրենակիցներիս յոյսերն ապարդիւն… ոչ անկարելի է, պէտք է աշխատել, պէտք է գնալ։ Ու քահանան, լսելի ճշտութիւնն ստուգելուց յետոյ գնում է Վալիի բնակարանը։

«Փաշան նախ կեղծաւորի յատուկ բնաւորութեամբ ասաց. «Մենք որոշեցինք ձեզ այլ ևս նեղութիւն չը տալ. դուք կարող էք հանգիստ սրտով վերադառնալ ձեր հայրենիքը, իսկ այդ ժողովուրդը բոլորովին անվնաս կը գնա իր ծննդավայրը»։

—Բայց ես չեմ կարող այստեղից վերադառնալ, ասացի նրան. ես էլ պաշտօնեայ եմ, ինձ հրամայված է մինչև Վան գնալ, վերջապէս մենք արտասահմանի անցագիր ունենք, մենք կարող ենք առաջ գնալ եթէ կամենանք։

—Այդ նշանակութիւն չունի, թէ դուք անցագիր ունէք, պատասխանեց փաշան. ձեր գնալու դժուարութիւնները շատ են. վերջապէս ձեզ գրականապէս ասում եմ, թէ ինձ յայտնված է, որ ձեր գնալն անկարելի է. դուք պէտք է վերադառնաք»։

Ու Տէր հայրը վերադառնում է, իսկ գաղթականները շարունակում են իրանց ճանապարհը և հասնում անվտանգ իրանց հայրենիքը։

Տիգրան

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի 3-ին հայոց դրամատիքական ընկերութեան խումբը, մասնակցութեամբ տ. Սիրանոյշի, խաղաց Մուրացանի «Ռուզանը»։ Այս պիեսը, որ հեղինակը կոչել է պատմական դրամա, վեր առնելով նիւթը 13-րդ դարի հայոց պատմութիւնից, երբ Հայաստանը ենթարկվել էր թաթարների արշաւանքին, նպատակ ունի վերակենդանացնել հասարակութեան յիշողութեան մէջ Արցախի Խաչէն գաւառի կեանքից մի տխուր դէպք։ Այդ գաւառի իշխան Հասան-Ջալալ Դօլա, ինչպէս յայտնի է պատմութիւնից, իր դուստր Ռուզանին տուեց կնութեան թաթարների խանին. սակայն նրա այդ պախարակելի վարմունքը չազատեց նրա կեանքը. Նա գըլխատվեց խանի հրամանով և իր դուստրը, խանի կինը միջնորդեց, որ հօր մարմինը յանձնվի իրան։ Պատմական այս դէպքի հեղինակը ուրիշ գոյն և կոլորիտ է տուել և կամեցել է Ռուզանից ստեղծել մի հայրենասէր օրիորդ, մի հայկական Ժաննա դ'Արկ, ղեկավարվելով, երևի, «բանաստեղծական ազատութեան» նկատումով։ Այսօր, մենք չենք խօսի պիեսի մասին, քանի որ յաճախ նրա մասին խօսվել է մեր մամուլի մէջ և ենթարկվել նոյն իսկ խիստ քննադատութեան։ Անկասկած, գըրված լինելով կեղծ-դասական ոճով, նմանողութեամբ Արշակ Բ.-ի, նա կարող է արդարացնել կրիտիկայի խիստ գնահատութեանը, բայց միւս կողմից անուրանալի է և այն, որ ունենալով բեմական (սցենային) մի քանի արժանաւորութիւններ, մի քանի աջող [illegible], խօսելով ժողովրդի որոշ զգացումների հետ, նա դարձել է ժողովրդական պիես և այդ պատճառով մինչև այսօր մնացել է և երևի դեռ երկար կը մնայ հայ ռեպերտուարի մէջ, թէև գեղարուեստական կրիտիկան մոռացութեան տայ նրան։

Հասան-Ջալալ իշխանի դերը կատարում էր պ. Գեւորգեան. նա կարողացաւ ստեղծել իր խաղից մի դեր—մանաւանդ այն տեսարանի մէջ, երբ Ռուզանի հարսանեկան ուրախութեան հանդէսը փոխվեց ողբի, թաթարների յարձակման գուժի պատճառով—որ խոր կըսկծով յուզեց հանդիսականներին։ Տիկին Սիրանոյշ, որ կատարում էր գլխաւոր հերոսուհու, Ռուզանի դերը, չը նայելով պաթէտիկ խօսքերին, որոնցով խճողված է այդ դերը, իր ձիրքով դարձրեց Ռուզանին մի հայրենասէր, անձնուրաց կին, որ գիտէ, աղէտների րոպէում, իր անձնական երջանկութիւնը, իր կուսական սէրը զոհ բերել հայրենիքի փրկութեան սեղանի վրա։ Աբէլեան, որ կատարում էր ծերունի Ջաքարէ իշխանի դերը, թոյլ էր և միայն վերջին տեսարանում, երբ նա ներկայացաւ թաթարների զօրապետ Բուղայի առաջ և պաշտպանեց իր երկրի դրօշակի պատիւը։ Նա կարողացաւ փայլ տալ իր դերին։ Լաւ չէին խաղում տ. Մէլիքեան, Շանոյշի դերում և տ. Աղնիւ Գայեան Ռէնի դերում, բայց շատ բնորոշ էր պ. Մամիկոնեան Ջօլայի դերում։ Մեծ աջողութեամբ խաղաց պ. Յարութիւնեան Սիւնեաց իշխան Համազասպի դերը, մի դեր, որ հեղինակը, թվում է մեզ, կամեցել է նմանեցնել, բայց անաջող, «Օթելլօ» դրամայի Եագօի դերին։ Ես չը հասկացայ միայն, ինչու անպատճառ Սիւնեաց բոլոր իշխաններին վիճակված է մատնիչի և հայրենիքի դաւաճանի դեր կատարել. միթէ լոկ այն պատճառով, որ 5-րդ դարում Վասակ Սիւնին ստացել է այդ տիտղոսը։

Հասարակութիւն շատ չը կար թատրոնում։ Տիկին Սիրանոյշ ողջունված ծափահարութիւններ և ծաղկեփունջ ստացաւ և հեղինակն էլ մի քանի անգամ բեմ կանչվեց։

Հ. Ա.

ՂՐԻՄԻ ԱՓԵՐԻՑ

(Թռուցիկ տպաւորութիւններ)

IX

«Նոր աշխարհի» կալուածքը

Սուդախի ձորահովտից, մօտաւորապէս եօթն վերստի վրա են գտնվում իշխան Գոլիցինի «Նոր Աշխարհ» ընդարձակ կալուածները, որտեղ և ապրում է ինքն իշխանը։ Ամբողջ ճանապարհը սարերի ծառազարդ լանջերովն է անցնում, որի անհամար ոլորապտոյտները, օդում կախված ժայռերը, խորունկ ձորերը անմիջապէս յիշեցրին ինձ Կովկասի ռազմավիրական ճանապարհը, միայն այն տարբերութեամբ, որ այստեղ գրեթէ ամբողջ ճանապարհին 20—30 սաժէն հեռաւորութեան վրա երևում են գեղեցիկ ծովի ալեծուփ ափերը։ Ճանապարհին թէ գրաւիչ է և թէ զարմանալի Գուշ-գայա կոչված այն լեռը ապառաժի վիթխարի գանգուածը, որի անչափելի ճեղքերից դուրս են ցցվել հարիւրաւոր ծառեր։ Գուշ-գայա, այսինքն Թռչուն-սար կոչվում է նրա համար, որ նրա բարձր գագաթի վրա միայն արծուի երամներն են սաւառնում։

Լեռնային մաքուր օդը, երկու կողմից լեռներով պարփակված ընդարձակ հովիտը ու կիսաբոլորակ խաղաղ ծովափը անկասկած պիտի գրաւէին ընդարձակ միջոցներ ունեցող ու կեանքի անդորրութիւն որոնողի ամբողջ ուշադրութիւնը։ Եւ վերոյիշեալ իշխանը ձեռք բերելով այդ տեղը, մշակել է տալիս հողը և քսանհինգ տարվայ ընթացքում՝ տնկում է տասնեակ դեսեատին այգիներ ու նոճիներով, կաղամախիներով, նշենիներով լի պարտէզներ, առանձին խնամքով պահում է [illegible] օրանժերէյներ, շինել է տալիս հոյակապ բնակարաններ, ու այդ կալուածների ճակատին էլ դրոշմել «Նոր Աշխարհ» անունը։

Ունենալով մեծամեծ այգիներ։ իշխանը ունի և գինու մեծ արդիւնաբերութիւն։ Նրա գետնափոր գինեգործարանները ցոյց են տալիս, թէ որքան կատարելագործված եղանակով է այստեղ պատրաստվում թանգագին գինիներ, շամպանիաներ։ Գլխաւոր գինեգործը մի անգլիացի է։

«Նոր Աշխարհի» կալուածներում միակ հետաքրքիր բանը՝ ծովի ափում գտնվող մի [illegible] քարայրն է։ Միայն պէտք է այդ փոքրիկ քարայրը՝ [illegible] եղած մի մեծ ժայռի լանջով՝ սար ճանապարհ բաց անելու համար կալուածատէրը ծախսել է մի քանի տասնեակ հազարներ…

Դիտելով բնութեան անդորր կրծքում հանգչող այս «Նոր Աշխարհը», տեսնում եմ, որ պարզապէս ոսկեհորթի դիւթական գաւազանն է արել այդ բոլորը…

Հին-Ղրիմ. Սուրխաթեան

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԷՐԻՑ

Հոկտեմբերի 30-ին

Սրանից երկու շաբաթ առաջ փողոցում Բադալ Ծատուրեանը իր համագիւղացի Սըմբատ Աթեանի հետ վիճելիս, յանկարծ այդ վէճը կուի անցնելով՝ Աթեանը դանակի մի հարուածով վէրք է հասցնում Ծատուրեանի փորին և այս վերջինս չորս օրից յետոյ վախճանվում է։ Հոկտեմբերի 27-ին երկու եղբայրներ՝ Արշակ և Կօնօ Բաբախանեանցները մի չնչին բանի համար վէճի են բռնվել և Արշակը դաշոյնի հինգ հարուածով մէջքին, կողքին և կառնը վիրաւորել է իր հարազատ եղբայր Կօնօին, վիրաւորվածի դըրութիւնը անյուսալի է։

Ինչպէս լսել էինք, պ. Ռոստոմ Մարտիրոսեանց անցեալ տարի ուսուցչարանական բարձր իշխանութեան դիմել էր խնդրագրով կիրակնօրեայ դպրոց բանալու Շուլավէրում, կարծեմ թոյլտուութիւն էր ստացել, և մենք սպասում էինք, որ անմիջապէս սեպտեմբերից կը բացվի դպրոցը, սակայն մինչև օրս չը կայ ու չը կայ։ Չը գիտենք պատճառը. լսում ենք, որ պ. Մարտիրոսեանցը հոգում է միայն ուսումնարանական ծախքը, իսկ ուսուցիչներին ռոճիկը թողնում է երիտասարդ ոյժերի ուսուցիչների վրա, որ նրանք ձրի պարապեն։ Իրաւ, շատ լաւ կը լինէր, եթէ այստեղի երիտասարդներից գտնվէին մի քանիսը, որ պարապէին ձրի, բայց եթէ չը կան այդպիսիներ, պարտքը կրկին վերապահված է պ. Մարտիրոսեանին, որը չնչին գումարի համար չի յետաձգի իր ձեռնարկած գործը իր հայրենիքի համար։

Ամառը տեղիս երիտասարդները մի քանի ներկայացումներ տուին յօգուտ տեղական հիւանդանոցի, նոյն երիտասարդները մտադիր են մի շարք ներկայացումներ տալ ձմեռվայ սեզոնին։ Սակայն այնքան դանդաղ են սկսում գործը, որ նման են անջուր ջրաղացի։

Ա. Դալլաքեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք կարող ենք հաղորդել հետևեալ տեղեկութիւնները քաղաքային առաջին գիշերօթիկ ապաստարանի գործունէութեան մասին։ Հոկտեմբեր ամսում գիշերել են 1051 հոգի, որոնցից 935 հոգի եղել են տղամարդիկ, իսկ 116 հոգի կանայք։ Ըստ ազգութեանց բաժանվում են հետևեալ՝ ռուսներ 404 տղամարդ և 82 կանայք, հայեր 358 տղ. վրացիք 123 տղ. և 31 կին, թուրքեր 33 տղ. լեհեր 17 տղ. զանազան ազգութիւններից 8 կին։ Ըստ պարապմունքի ամենամեծ թիւը կազմում են մշակները (460

մտածում էր բժիշկը։ Եւ նրա հայեացքը կանգ առաւ մի հոյակապ բանուորի վրա։ Դա մի հարուստ մարմնակազմ էր, յաղթ բազուկներով, կարող կրծքով ու թիկունքով, ջլուտ, [illegible] ոտներով և հնազանդ ու մեղմ դէմքով։ Նրա թիկունքին դրեցին մի ահագին քար. ծանրութեան տակ բանուորի իրանը կռացաւ, պարանոցը ձգվեց առաջ ու կարմրեց, ոտները մի վայրկեան դողդողացին, բայց նա պահեց իրան, մի բան մտմտաց ու շարժվեց առաջ։ Նրա ոտների տակ տախտակները ճռճռում էին ցաւով, ինքը հեւում էր ու տընքում, բայց և այնպէս բարձրանում էր աստիճաններով վեր, վեր։ Բժիշկին հետաքրքրեց ու գրաւեց այս տեսարանը, առաջին անգամ շաբաթներից ի վեր նա նայում էր իր լուսամուտից ուշադրութեամբ ու սիրով։

«Հիանալի է» բացականչեց նա, երբ բանուորը իր բեռը հասցրեց շէնքի ամենաբարձր մասին, «հիանալի է, ոյժ, առողջութիւն և աշխատանք, երեք հրաշագործ զօրութիւններ մի հատ մարդու մէջ. գեղեցիկ է, կեանքի հըմայքն է սա»։

Աւելի հեռուն, կառուցվող շէնքից այն կողմը մի կառք էր անցնում փողոցով, բայց աջ կողմի սև ձին խրտնել էր մի բանից, ծառանում էր յետին ոտների վրա, փրփրում ու փնչացնում և ոչ մի կերպով առաջ գնալ չէր կամենում։ Կառապանը կատաղած՝ ձգձգում էր երասանակները, հայհոյում էր ու անիծում, նրա երկայն մտրակը խաղում էր օդի մէջ ապա շրխկալով իջնում վախեցած կենդանու թիկունքին։ Վերջապէս կառքը թափով սլացաւ, կառապանը մի վերջին անգամ կատաղաբար ճօճեց մտրակը և մի ուժգին հարուած տուեց, փողոցի ցեխերի մէջ նստած մարդուն հայհոյելով։

—Դէ, առ քեզ հա՛, չան պէս թաւալ է տուել ցեխերի մէջ, կարծես հօր տունը լինի, ոտը կարվել է գլխին, ձին խրտնում է, քիչ էր մնում կառքս փշուր փշուր անի։

Այս էլ հետաքրքիր էր. բժիշկը աւելի քան մտածած՝ ուշադրութեամբ հետևում էր այս տեսարանին և զարմացած նկատեց, որ գետնի վրա նստած մարդը մտրակի հարուածի տակ տեղից չը շարժվեց, յետ չը նայեց, ձայն չը հանեց, չը բողոքեց։

«Անզգայ թշուառական, մտածեց բժիշկը, և տեղն է, մուրացկանութիւնը նոյնպէս կեանքի գարշութիւնն է, նրա վրայի շարաւոտ պալարն է, աշխատանք, աշխատանք»։

Բայց մարդը նստած էր մի և նոյն տեղում անշարժ, գլխաբաց, թիկունքը դէպի փողոցը և երեսը դէպի մայթը դարձրած։ Գլուխը յուսահատօրէն կրծքին կախած, պարանոցը ուսերի մէջ քաշած՝ նա իր աղտոտ ցնցոտիներով գետնի վրա կազմում էր մի նողկալի կոյտ, որ կարծես աղբատար սայլը [illegible] էր տանել։

Ուշ աշուն էր. մթնոլորտը խոնաւ ու ցուրտ, երկինքը լալկան ու մռայլ։ Փողոցի ծառերի դեղնած տերևները առանց քամու՝ ինչպէս կեանքից յոգնած, ձանձրացած էակներ, մեղմիւ պոկվում էին ծառերից, և մանրիկ պտոյտներով ու թեթև սլացքով ընկնում ներքևում նստած մարդու բաց գլխին, խառնվում էին մազերին, շարժվում ուսերին, սահում, կամացուկ փափսում էին նրա ականջին անխուսափելի, անողոք մահվան խորհուրդը՝ նրա հետ իրանց անդարձ կորուստը լալու համար։ Բայց մարդը շարունակում էր անշարժ նստած մնալ, գլուխը քաշ, մէջքը աղեղնաձև երկու տակ ծալված և երեսը միշտ դէպի մայթը, որտեղից անցնում էին այնքան երջանիկ ոտներ, մաքուր, պայծառ կօշիկներ։

«Գարշելի է», մտածեց բժիշկը, երեսը դարձրեց լուսամուտից, մօտեցաւ սեղանին, բացեց նոյն հաստ գիրքը, կրկին խորասուզվեց ընթերցանութեան մէջ։ Նա մերթ ընդ մերթ գլուխը բարձրացնում էր, ճակատը շփում ձեռքով, աչքերը յառում այս կամ այն մեծ մարդերի պատկերին, ապա շարունակում կարդալ, կարդալ. այնքան խելացի, այնքան սփոփիչ, քաղցրանոյշ բան կար այդ մի հատիկ գրքի մէջ, մի ամբողջ աշխարհ։ Դուռը կամացուկ բացվեց. ծառան էր։

—Պարոն, հիւանդ կայ։

—Թող ներս գայ։

Բժիշկը գիրքը փակեց, ոտքի կանգնեց և նորից սկսեց քայլել նոյն ինքնագոհ, երջանիկ տրամադրութեամբ։ Դուռը կրկին բացվեց, այս անգամ ներս մտաւ մի տարօրինակ արարած։ Ցեխի ու աղբի մէջ կորած մի [illegible] մարդ էր նա, որ որքան արգահատելի էր, նոյնքան էլ անախորժ իր այլանդակ արտաքինով։ Այդ անարգված, տրորված խեղճութեան վրա սակայն իշխում էր մի դէմք, դառնացած ու թշուառ, որի վրա երկար ձմեռների մռայլ, անշող երկնքի պէս, վաղուց էր դադարել ժպիտը։ Անփայլ ու խոր ընկած աչքերը՝ յօնքերու հովանու տակ թաղված, նմանում էին առկայծող ճրագների, և նրանց վրա արագ արագ իջնում էին կոպերը կարծես վերջին կայծը բորբոքելու համար։ Եւ այդ մարդը միայն մի հատիկ ոտք ունէր, որ ցցի պէս անկել էր յատակին, իսկ միւս ոտքի տեղ նրա իրանից քաշ էր ընկել անճոռնի կոճղի պէս ազդրի փոքրիկ մնացորդը, որ նողկալի կերպով ճօճվում էր ամէն անգամ՝ երբ մարդը մի չնչին շարժում էր անում։ Մարմնի հաւասարակշռութիւնը պահպանելու համար նա ստիպված էր մի ձեռքով յենվել մի հաստ գաւազանի, որ նրան ծառայում էր կտրված ոտքի տեղ։

Մարդը մտաւ, բայց չառաջացաւ, կանգնած մնաց դրան մօտ՝ ասես վախենալով աւելի հեռուն, դէպի սենեակի խորքը տանել ցնցոտիները և կեղտը իր բեռը։ Բժիշկը անշարժ նայում էր այս տարօրինակ այցելուին և բոլորովին զարմացած էր. անծանօթի արտաքինը նրան լաւ բան չէր ասում։ Բաւական ժամանակ երկուսն էլ լուռ էին. նայում էին իրար քննող հայեացքով։

(Կը շարունակվի)

հոգի) և գործ կատարելու անընդունակները՝ 294 հոգի։ Ապաստարան են այցելել նմանապէս և 42 աշակերտներ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Քիշինևում, նոյեմբերի 6-ին, կը սկսվեն Օդեսայի դատաստանական պալատի բաժանմունքի նիստերը՝ դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ քննելու Քիշինևի անկարգութիւնների գործը, որ կը տևէ ոչ պակաս քան մէկ և կէս ամիս։ Գործի չափերի մասին կարող են գաղափար տալ հետևեալ թւերը։ Կոտորածի և աւերման ենթարկվել է համարեա Քիշինևի մի երրորդ մասը—1350 տուն։ Ձերբակալված են մօտ 800 անձինք։ Սպանված են 38 հրէաներ և 2 ռուս։ Բոլոր վիրաւորվածների թիւը հասնում էր 500-ի, որոնց թւում և 67 քրիստոնեաներ, որոնք խնամվում էին զեմստվոյի հիւանդանոցում։ Թեթև վէրքեր են ստացել ոստիկանական 68 ծառայողներ, երկու օֆիցեր և 5 զինւոր։ Նախնական քննութիւնը կատարում էին դատաստանական 4 քննիչներ, որոնք հարց ու փորձի են ենթարկել մի քանի հազար մարդու. ատենութեան մէջ մեղադրվում են մօտ 100 մարդիկ և 250 հոգի էլ անկարգութիւններին մասնակցելու համար։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը աչքի առաջ ունի մի շարք տեղեր, առաւելապէս Կովկասում և Սիբիրում, որ մտադրութիւն ունի բանալ գիւղատնտեսական փորձնական կայարաններ։ Ամենից առաջ կայարաններ կը բացվեն Սիբիրում, որ վերջին ժամանակ գիւղատնտեսութիւնը և մանաւանդ նրա մի ճիւղը՝ կաթնատնտեսութիւնը մեծ քայլերով առաջ է գնում։

—

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը միջնորդութիւն է յարուցել երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան առաջ, որով խնդրում է 1800 րուբլի եւ տալ ընկերութեան՝ կովկասեան յոբելինական ցուցահանդէսից մնացած դէֆիցիտը ծածկելու համար։

—

Թիֆլիսի քաղաքային ուպրաւայի առողջապահական յանձնաժողովը ներկայումս քննում է քաղաքում հիւանդանոցի համար տեղը ընտրելու հարցը։

—

Մեզ հաղորդում են, որ այն յանձնաժողովը, որը նշանակված է քաղաքիս ձիաքարշ երկաթուղու վրա հսկելու, մշակել է պարտաւորեցուցիչ կանոններ, որով պէտք է ղեկավարվի ձիաքարշ ընկերութեան վարչութիւնը և արդէն ներկայացրել է ուպրաւայի քննութեան։

—

Երկու պարոններ՝ բէկ-Աւագեան և Ջամուսպով դիմել են քաղաքային վարչութեան, խնդրելով թոյլ տալ բացառապէս իրանց քաղաքի փողոցներում աւտոմօբիլներ բանեցնելու 25 տարի ժամանակով։ Սկզբից մտցնում 10 մարդատար և 10 ապրանքատար աւտոմօբիլներ, իսկ այնուհետև խոստանում են իւրաքանչիւր տարի աւելացնել 4 հատ։ Գինը որոշում են ձիաքարշի փողոցների համար 4 կոպ. իւրաքանչիւր մարդու համար, իսկ ձիաքարշ գիծ չեղած տեղերում 5 կոպ. ապրանքի համար վակզալից մինչև քաղաքի կենտրոնը պուդին 1½ կոպ. իսկ մի ծայրից միւս ծայրը 2 կոպ.։

—

Հինգշաբթի, ամսիս 6-ին, Թիֆլիսում ընտրված նորակոչ զինւորները պիտի ներկայանան զինւորագրութեան գլխաւորին, որի ներկայութեամբ վիճակահանութիւն պիտի կատարվի որոշելու համար, թէ որ զինւորը ուր պիտի գնայ ծառայութեան համար։ Եկող տարի զինւորակոչութեան են ենթարկվում այն երիտասարդները, որոնք ծնվել են 1882 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1883 թ. հոկտեմբերի 1-ը։

—

Առաջիկայ յունվար ամսից սկսած Ռուսաստանի պետական երկաթուղիների վրա կը սկսվեն գործ ածվել էդմօնսոնի տիպի տոմսակներ ճանապարհորդների համար, ինչպէս նաև առանձին տեսակ տոմսակները այսուհետև կը տպագրվեն պետական թղթերի պատրաստութեան գործարանում։

—

Մեզ հաղորդում են, որ Բաղրամով անունով մի պարոն որը ունի ասֆալտի գործարան, դիմել է քաղաքային ուպրաւային թոյլտւութիւն խնդրելով վերջինիցս պալատի առաջևի մայթը շինել ասֆալտից։ Ուպրաւան սկզբունքով ընդդէմ ոչինչ չունենալով այդ առաջարկութեան դէմ, որոշել է իր համաձայնութիւնը տալ այն դէպքում, երբ նախ պալատական կառավարութիւնը ընդդէմ չը լինի դրան և երկրորդ պ. Բաղրամովը կը համաձայնվի իր վրա վերցնել 10 տարվայ ընթացքում այդ մայթի կարկատանը։ Այդ առթիւ պալատական վարչութիւնից դրական պատասխան է ստացված։

—

Զինւորական-բժշկական ակադեմիան մտնելու իրաւունք, «Пет. Вѣд.» լրագրի ասելով, տուած է բացի րէալական դպրոցներում աւարտած երիտասարդներից, նաև նրանց, որոնք աւարտում են իրանց ուսման ընթացքը կադետների կորպուսներում։ Բժշկական ակադեմիան մտնող կադետներից կը պահանջվի միայն քննութիւն լատիներէն լեզւից այն չափով, ինչ չափով նա պահանջվում է րէալական դըպրոցների ընթացաւարտներից։

—

Համաշխարհական ցուցահանդէսը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կը բացվի 1905 թւականին։ Նախապատրաստական աշխատանքները ցուցահանդէսի կազմակերպութեան համար արագութեամբ առաջ են գնում։ Շատ հաւանական է, որ այդ ցուցահանդէսին կը մասնակցեն նաև ռոմանական պետութիւնները։

—

Պրոֆէսոր Պէլ գտել է Ցարսկոե-Սելոյի շըրջականերում բացիլի բաւականաչափ հարուստ հանք։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Պարապեա վարդապետ Տէր-Մկրտչեան նշանակվել է Երևանի թեմի կառավարիչ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Իրաւունք է տրված էլէկտրական երկաթուղի տանելու Բիբի-Հէյբաթից մինչև Բալախանի։ Երկաթուղու գիծը կը սկսվի Բայիլովում գտնվող «Электрическая сила» ընկ. էլէկտրական կայարանից կանցնի Բաիլովի և քաղաքի փողոցներով մինչև «Сабунчи» կայարանը քաղաքում, իսկ այնտեղից ուղղակի Բալախանի։ Ամբողջ գիծը կը լինի 16,27 վերստ։ Ընկերութիւնը պիտի լինի ակցիոներական, 1,800,000 րուբլի դրամագլխով։ Բոլոր ծախքերը հաշւած, գծի իւրաքանչիւր վերստը պիտի արժենայ 110,000 րուբլի։ Գնացքի արագութիւնը քաղաքից դուրս պիտի լինի 30 կիլոմէտր, իսկ քաղաքում ոչ աւել 20-ից»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 26-ին, տեղիս ս. Պետրոս-Պօղոս եկեղեցում, պատարագին, թեմակալ առաջնորդի և երկսեռ խուռն բազմութեան ներկայութեամբ երգիչ Ս. Բարխուդարեան երգեց պատարագից մի քանի կտորներ՝ ողբասացութիւնը, «Ամեն հայր-սուրբ» և «Գոհանամքը»։ Չը նայելով որ յիշեալ եկեղեցում խմբապետ Ն. Մեգնիկեանի քառաձայն գեղեցիկ խումբը ամեն կիրակի երգում է, սակայն հասարակութիւնը շատ քիչ է յաճախում եկեղեցի, բայց այս անգամ շնորհիւ պ. Բարխուդարեանի մասնակցութեան ժողովուրդը լցվել էր եկեղեցում։ Հայերն և օտարազգիներ։ Պ. Բարխուդարեան այստեղից մեկնում է Ցարիցին՝ այն կողմերում եւ կօնցերտներ տալու»։

—

ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹԻՑ մեզ գրում են. «Այսօր, նոյեմբերի 2-ին, բացվեց «Մանթաշեան և ընկ.» ֆիրմայի բանւորների և արհեստաւորների ճաշարանը։ Այդ հաստատութիւնը գոյութիւն ստացաւ շնորհիւ տիկ. Եղ. Իւզբաշեանի։ Նախկին կարգադիր անդամ Մարդասիրական ընկերութեան ճաշարանի՝ յարգելի տիկինը այստեղ էլ, Բիբի-Էյբաթում, ջանք չը խնայեց մի բանով օգնելու նաւթակոլոլ ու մոռացված բանւորին։ Շնորհակալութիւն բարի եռանդի համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, հոկտեմբերի 1-ին

Սալմաստ գաւառի ամենահին դպրոցը Հաֆտուան գիւղինն է համարվում, որ հիմնել է հանգուցեալ Վարդան Գոլոշեանը 1886 թւին։ Յիշած ժամանակից մինչև այժմ եթէ դպրոցարան-ընթերցարանը փոքր ի շատէ կանոնաւոր կերպով ծառայած լինէր իր նպատակին, կարելի է ասել, որ մեծ զարկ տուած կը լինէր ոչ միայն Հաֆտուանի, այլ և միւս գիւղերի կրթական գործին էլ։ Սակայն, ցաւելով պէտք է ասել, որ այդքան երկար տարիների ընթացքում իր գոյութիւնը պահպանող գրադարանը չէ ունեցել մի ուժեղ վարիչ մարմին, որ կարողանար գրադարանը բարեկարգ դրութեան մէջ պահել և նպատակին ծառայեցնել։

Գրադարանը մի քանի տարի խանգարված դրութեան մէջ է եղել. այդ առիթից օգտվել են շատ շատերը և սեփականացրել են իրանց մօտ գտնված գրքերը, և մի քանիսները թոյլ են տուել իրանց գողանալ ընտիր օրինակներ. մինչև այսօր էլ գրադարանը չունի իր համար որտեղ կարելի լինի կանոնաւորել և ամփոփել եղած գրքերը.

Գրադարանն ունի իր կանոնադրութիւնը՝ հաստատված թեմական առաջնորդարանից. Ռուսաստանում մի քանի պարոններ (սալմաստեցի) մտածել են առանձին մի ճիւղ հիմնել և աշխատել գրադարանի նիւթականը ապահովեցնել. այդ նպատակով նրանք նուիրատւութեան են դիմել. Նուիրատուների մէջ աչքի է ընկնում պ. Առաքել Ոսկանովը, որ բարեհաճել է նուիրել հարիւր րուբլի և մի յոյն, Գէորգատի ազգանունով, որ նուիրել է տաս րուբլի։ Նուէրների գումարը հասնում է մօտ երկու հարիւր րուբլու, որ մի պատկառելի գումար է ներկայացնում։

Ներկայումս գրադարանը ունի մօտ 550 հատոր գիրք, մօտ 800 օրինակից բաղկացած և այդ բոլորը տեղ չը լինելու պատճառով տեղաւորված են երկու փոքրիկ պահարաններում։ Ցանկալի է, որ գրադարանի վարչութիւնը մտածէր գլուխ բերել մի տարուց ի վեր կիսատ թողած շէնքը կանոնաւորէր գրադարանը և այնպէս—եթէ ոչ կորուսածը յետ բերել—գոնէ ունեցածը չը կորցնել։

Կարծում ենք, որ Ռուսաստանի ճիւղն էլ չի զլանայ մի որոշ գումարով օգնել տեղական վարչութեան, ինչպէս և հաֆտուանցի այն պարոնները, որոնք մեծ գործեր ունեն Ռուսաստանում և նախանձախնդիր են իրանց հայրենի գիւղի կրթական և հասարակական գործին. Թող յոյնն ու ռաւրեցի պ. Ոսկանովը քաջալերիչ օրինակ հանդիսանան տեղացի հարուստներին։

Մոլորակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիացի հոգևորականներից մէկի հետ խօսելու ժամանակ Պիոս X-րորդ պապը, ի միջի այլոց, ասաց, որ նա վաղուց հետաքրքրվում է Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուբէի անձնաւորութեամբ, ինչպէս առհասարակ հետաքրքրվում է այն անձնաւորութիւններով, որոնք դուրս են եկել ժողովրդի միջից և կարողացել են իրանց սեփական արժանաւորութիւններով բարձր դիրք գրաւել։ «Ես շատ ցաւում եմ,—աւելացրեց Պիոս X-րորդ—որ իմ աստիճանը և Լուբէի բարձր դիրքը, քաղաքական նկատումներով, թոյլ չեն տալիս ինձ մօտենալու նախագահի հետ և դիմելու նրան, ինչպէս կարող է դիմել մի հովիւ իր հօտի սովորական անդամներից մէկին։ Ես համոզված եմ, որ մի մտերմական խօսակցութիւն իմ և նախագահի մէջ շատ բան կարող էր բարւոքել եկեղեցու և Ֆրանսիայի յարաբերութիւնների մէջ։ Ամենայն դէպս նախագահ Լուբէ կարող է համոզված լինել, որ ես տածում եմ դէպի նրա անձնաւորութիւնը առանձին յարգանք և լաւագոյն զգացմունքներ ոչ միայն նրա համար, որ նա Ֆրանսիայի ներկայացուցիչ է, այլ և նրա համար, որ համարում եմ նրան անձնապէս ականաւոր մարդ, որ կատարելապէս արժանի է ընդհանուր յարգանքի»։

—Գերմանական սօցիալիստներից Բէբէլ, Զինգէր, Պֆանկուխ, Արօն, Լէդեբուր և ուրիշները դրել են իրանց թեկնածութիւնը Բեռլինի համարեա բոլոր շրջաններում՝ պրուսական Լանդտագի անդամ ընտրվելու համար։ Նոյն ուղղութեամբ գործում են սօցիալիստները և Պրուսիայի միւս նշանաւոր քաղաքներում։ Բէբէլ իր ճառի մէջ, որ արտասանեց Բրէսլաւլում, յայտնեց, որ եթէ ազատամիտ ընտրողները մի քիչ տեղ չեն տալ սօցիալիստներին լանդտագում, այդ դէպքում վերջինները ամեն տեղ կը սկսեն գործել ազատամիտների դէմ։ Ազատամիտ մամուլը չափազանց թողված է այն սպառնալիքից և վախենում է, որ պայքարը ազատամիտների և սօցիալիստների մէջ շահաւէտ կը լինի միայն յետադիմականներին, որոնք օգուտ կը քաղեն երկու կուսակցութեան սխալներից՝ իրանց անդամներին լանդտագ անցկացնելու համար։ Եւ եթէ այս ցաւալի դէպքը տեղի ունենայ՝ այսինքն յետադիմականները կազմեն լանդտագում բացարձակ մեծամասնութեան, հաւանական է, որ նրանք կընդունեն յետադիմական դպրոցական օրինագիծը և կը սահմանափակեն ընկերակցութիւնների ազատութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 նոյեմբերի

ՍԿՎԵՐՆԵՑԻ. Նոյեմբերի 3-ին, առաւօտեան, վախճանվեց պրինցուհի Ելիզաւետան՝ Հեսսէն Դարմշտադտի մեծ դուքսի աղջիկը։

ՊԵԿԻՆ. Միացեալ նահանգների պահանջը՝ Իըչժուն առեւտրականութեան համար բաց անելու մասին, զարմանք առաջացրեց։ Ճապոնական և անգլիական դեսպանները Սէուլում պահանջեցին Իօզամպօն բաց անել։

ԲՈԿՕՏԱ. Կոլումբիայի նախագահը խնդրեց սպանիա-ամերիկական հասարակապետութիւններից օգնել՝ պատերազմելու Պանաման նորից յետ գրաւելու համար։

4 նոյեմբերի

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ. Ճապոնական դիպլոմատիական աստիճանաւորը բացատրեց, որ Իօզամպօում ռուսների շինած ամրոցը փայտարդիւնաբերական ընկերութեան պահեստն էր։ Պորտ-Արտուրում րէալական դպրոցի և գիմնազիայի բացումը տեղի ունեցաւ փոխարքայի ներկայութեամբ և մեծ հանդիսաւորութեամբ։

ՍՕՖԻԱ. (Ցառուկ. բուլղարական դիմադրական շրջաններից). Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ նոյեմբերի 21-ի ձայնատւութեան շնորհիւ նորից մտցրած է ներգործելու սիստեմը, որով վերացվում է հարցերի ազատ քննադատութեան հնարաւորութիւնը, դիմադրական կուսակցութիւնը մասնաւոր ժողովում քննեց հետևեալ հարցը՝ արդեօք նա պէտք է գործունեայ մասնակցութիւն ունենայ ժողովում, թէ շարունակէ կռիւը, ոչ մի բանի վրա ուշք չը դարձնելով։ Որոշված է, որ դիմադրական կուսակցութեան պարտականութիւնն է հնար եղածի չափով մասնակցել յիշեալ ժողովին. դրա հետ միասին որոշված է ապօրինի գործողութիւնների դէմ բողոք ներկայացնել։

ԲԵՐԼԻՆ. Գերմանական և ֆրանսիական ֆինանսական խմբերը միասին քննելով Բաղդադի երկաթուղու վերաբերեալ հարցը, համաձայնութիւն կայացրին, որ բաւարարութիւն է տալիս երկու կողմերին էլ։ Այժմ գոյութիւն ունի հետևեալ բաժանումը՝ 40%—ընկնում է գերմանական խմբին «Deutsche Bank»-ի հետ միասին. 30%—ֆրանսիական խմբին, որի ղեկավարն է «Banque imperial ottoman». 20% միւս պետութիւններին՝ աւստրիական, շվէյցարական, իտալական և թիւրքական դրամատէրերին, 10%—անատօլիական երկաթուղիների ընկերութեանը։ Դանիական թագաւորը նշանակված է պրուսական զօրքի գեներալ—ենթագնդապետ։

ՍԻՄԼԱ. Ձիով զբօսնելու ժամանակ լորդ Կիտչեներ վայր ընկաւ ձիուց, որի ժամանակ ծանր կերպով կոտրվեց նրա ոտքը։ Վնասվածի դրութիւնը բաւարար է։

ՊԱՐԻԶ. Իտալիայի և Անգլիայի միջև կապված է դաշնագիր, նման անգլօ-ֆրանսիական համաձայնութեան՝ միջնորդ դատարանի մասին։—Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտարարում է, որ ճիշդ չէ անգլիական լրագիրների հաղորդած տեղեկութիւնը յարաբերութիւնների խզման մասին Ֆրանսիայի և Սիամի միջև. իրաւի, յարաբերութիւնները մի փոքր լարված են, որովհետև Սիամը դանդաղում է Ֆրանսիայի պահանջած փոփոխութիւններն անել 1902 թւի դաշնագրի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ. Սուլթանը հրատարակեց իրադէ ռէդիֆների այն բոլոր բատալիոնների արձակման մասին, որոնք պահեստի մէջ են գտնվում Փոքր-Ասիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սկէրնէվիցիում Նորին Բարձրութիւն պրինցուհի Ելիզաւետա-Մարիա-Ալիսա-Վիկտորիա հիւանդացաւ ստամոքսա-աղիքային խողովակի սուր երևոյթներով. երեկոյեան տաքութիւնը բարձրացաւ և զարգացաւ սրտի գործունէութեան անկումը, որը, չը նայելով բոլոր ձեռք առած միջոցներին, դժբաղդ հետևանք ունեցաւ։ Պրինցուհին վախճանվեց առաւօտեան 9 ժամ 30 րոպէին։ Հիւանդութեան և անդամահատութեան մանրամասն արձանագրութիւնը կը հրատարակվի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

ՋԻԿԵԼԵԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Ս. Գ. ՏԻԵՏԻՅԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏԱՄԲԵԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. ԱԶՎԱՆԻՑԿԻ—ատամն. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. գիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ

ՊԱՏԿԵՐԱՒՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Մեծերի և փոքրերի համար, մեծերի համար իբրև ինքնուսուցիչ։ Գինն է 13 կոպէկ, հարիւրով գնողներին 10 կ.։ Դրանցից կարող են ստանալ որ և է անձի ձեռքով։ Հեղինակը ծրարով պատուէրներ կատարելու յարմարութիւն չունի։ 6—10

Քաղաքային երկդասարանեան դպրոցը աւարտած

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որոնում է գործակատարի, գրագրի կամ այլ պաշտօններ ձեռնտու պայմաններով։

Հասցէն—Полицейская ул., домъ Ханаева, Теръ-Григорянцу. 3—3

Լոյս տեսաւ

ԲԺԻՇԿ-ՈՒՍԱՆՈՂ ԳԷՈՐԳ ՄԱՂԱՔԵԱՆԻ

ՄԱՅՐ ԵՒ ԵՐԵԽԱՅ

Գինն է 40 կոպ.

Դիմել Тифлисъ, книж. магазинъ Гуттенбергъ կամ Армянск. баз. Гостинн. дворъ Манташева, М. Магакяну.

Գումարով առնողներին առանձին զիջում կը լինի։ 10—10

Լոյս տեսաւ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ

ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

վէպը, երկրորդ տպագրութեամբ

Գինն է 1 ր. 20 կ.

Նաև տպագրութեան են յանձնված նոյն հեղինակի «Հացի Խնդիր» և «Ցեցեր» վէպերը։

Դիմել հրատարակչին՝ Баку. Книжный магазинъ С. Д. Арутюнова. 6—7

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ
ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՈԼՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գեներալսկայա փողոցի վրա, Ալամեանի քարվանսարայում, նոր բացված է մաքուր հիւրանոց, կահաւորված սենեակներով և ամեն յարմարութիւններով։ Կան նոյնպէս և պարոնների համար ամբարներ։ Գները չափաւոր են։ 5—6

ԲԺԻՇԿ

Ս. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ։

Ամենայն օր Առաւօտ. 12—2 ժ.

Երեկոները 5—6 ժ.

Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի. № 20. Բախչիեւի դեղատան կից. Большая Ванкская ул. домъ Кузанова, № 20, рядомъ съ аптекой Бахчіева. 29—100

Աբոնեմենտ 6

ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի, Նոյեմբերի 6-ին

Հայոց դրամատիքական ընկերութեան խումբը

Մասնակցութեամբ ա. ՍԻՐԱՆՈՅՇԻ

կը ներկայացնէ

ԿԵԱՆՔ

Դրամա 4 արար., հեղ. Սերգէենկոյի և Պոտապենկոյի, թարգմ. Ա. Մուրադբէգեանի։

Վերջը

ՀԱՑԻ ՈՒ ՋՐԻ ՅՈՒՍՈՎ

Վոդ. 1 արար., հեղ, Բոդիալսկու, թարգմ. Տէր-Գէորգեանի։

Մասնակցում են.—Տ. տ. Ազնիւ, Մայսուրեան, Մելիքեան, Սիրանոյշ, Վարդուհի։ Գ.գ. Աբէլեան, Ազեան, Ալիխանեան, Անդրանիկ, Աղաջեան, Աւետեան, Յարութիւնեան, Մամիկոնեան, Գեւորգեան, Տէր-Դաւթեան, Ռշտունի և այլն։

Սկիզբը ճիշտ երեկոյեան ժամը 8-ին։

1—2 Ռեժիսոր Մ. Զարար.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ

Չորեքշաբթի, Նոյեմբերի 5-ին

կը ներկայացուի

ԵՒԳԵՆԻՅ ՕՆԷԳԻՆ

Օպ. 3 գործ. 7 պատկ. երաժշտ. Չայկովսկու.

Մասնակցում են.—Տ.տ. Բէնէ-Բաղինա, Կարբի, Լեւինա։ Գ.պ. Բայաչի, Սելեավին, Զիբալուզին, Գաւրիլով, Գերիլի։

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։ 1—1

Շուտով լոյս կը տեսնէ պատկերազարդ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

X ԳԻՐՔԸ

IX և X գրքերի բաժանորդագինն է 3 ր. Դիմել՝ Ервандy Лалаянцъ. Тифлисъ, Саперная, 5 կամ Семинарія Нерсисянъ. 1—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի հմուտ գործակատար պատրաստի հագուստեղէնի վաճառատան համար։ Ամսավարձն է 40—50 ռուբլի, ցանկացողները թող դիմեն Երևան II կարգի վաճառական Մկրտիչ Աղավելեանին։ 3—3

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Աշակերտաց համար.

1. Դասատետր կրօնի ա. տարի . — 25
2. » » բ. » . — 20
3. » » գ. » . — 30
4. Հին-ուխտ դ. » . — 35
5. Նոր-ուխտ ե. » . — 40
6. Գործք առաքելոց զ. » . — 40

Ուսուցչաց համար.

7. Ուղեցոյց կրօնի—Հին-ուխտի (սպառ.) — —
8. » » —Նոր-ուխտի . 2— 5
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ. 1—50
10. » » » Ե. » — 50

Ինձ դիմողներին տրւում են 1. 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղջ։

Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ „Гуттенбергъ“.

31—100 Սահակ քահ. Սահակեանց

ԾԱՂԿԵԱՅ-Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.-ից

հնարված

ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՉՈՒՆԻ ՄՐՑՈՂ

GRAND PRIX

Բարձրագոյն պարգև. Պարիզ 1900 թ.

(Метцль.) 148,196
(5 ա. ամս.) 2—10

ВЪ ПЯТНИЦУ, 5-ГО ДЕКАБРЯ

Въ помѣщеніи ТИФЛИССКАГО КРУЖКА

на усиленіе средствъ состоящимъ подъ Высочайшимъ Государя Императора покровительствомъ

Земо-Авчальской исправительной земледѣльческо-ремесленной колоніи

имѣетъ быть

ТАНЦОВАЛЬНЫЙ ВЕЧЕРЪ

СЪ КОНЦЕРТНЫМЪ И ЛИТЕРАТУРНЫМЪ ОТДѢЛЕНІЕМЪ

при благосклонномъ участіи многихъ артистокъ, артистовъ, любительницъ и любителей

Декораціи залъ Кружка —художника А. О. Новака. Кіоски художника Новака и воспитанниковъ колоніи. Выставка ихъ издѣлій.

Во время антракта будетъ играть оркестръ воспит. колоніи

Подробности въ афишахъ

Цѣна за входъ, съ благотвор. сборомъ, 2 р. 10 к. Преміи принимаются съ благодарностью. Начало концертнаго отдѣленія въ 8½ час., а танцы въ 10½ ч. вечера. Военный оркестръ. Вырѣзныя платья и фракъ не обязательны.

Хозяйка вечера свят. княг. Т. Д. Грузинская.

Распорядитель, Членъ Правленія А. С. Френкель

Билеты продаются у Членовъ Общества исправительной колоній: А. С. Френкеля, Грибоѣдовская, № 38. А. П. Мироновича и М. Д. Меликова, Судебная Палата. М. Г. Муата. Окружный Судъ, у мѣстныхъ Мировыхъ Судей и Нотаріусовъ, въ кондитерской Лотъ, Дворцовая и въ „Тифлисскомъ Кружкѣ“. 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ
1904 Թ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Գեղեցիկ տպագրութեամբ և յաւելուածներով

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ զարդարված է ս. Էջմիածնի, հայ զօրավարներ՝ Լօրիս-Մելիքեանի, Տէր-Ղուկասեանի և Լազարեանի պատկերներով։

Յաւելուածը հարստացրած է ժամանակագրական, վիճակագրական, գիւղատնտեսական, առողջապահական նոր տեղեկութիւններով։ Բացի այդ, կան ընթերցանութեան համար առանձին հատուածներ, ինչպէս Գրիգոր Լուսաւորչի վախճանը, նրա տեսիլը հայերի ապագայի մասին (աւանդութիւն), Լօրիս-Մելիքեանի, Տէր-Ղուկասեանի կենսագրութիւնները և պատերազմական քաջագործութիւնները։

Իբրև առանձին յաւելուած, Ծոցի օրացոյցի վերջում աւելացրած է առանձին բաժին—ԵՐԳԱՐԱՆ, ժողովածու ազգային նորագոյն երգերի։

Ծոցի օրացոյցի զուտ յաւելուածը 200 երեսից աւելի է։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ մէջ, որ իր տեսակում առաջինն է, առանձին տեղ են բռնում հայոց պատմութիւնից հատուածներ, ինչպէս՝ հայերի ծագումը, անցեալը և ներկան, հայ թագաւորութիւնները, ս. Էջմիածնի հիմնարկութիւնը, հայ տառերի գիւտը և հայոց տոմարը։ Կան նաև զանազան երգիծաբանական հատուածներ, արկածալի պատմութիւններ Սասունի և Զէյթունի կեանքից, ծիծաղաշարժ առակներ, Եզովբոսից, Գըլըպուլուց, Դալի-Քէչէլից, զուարճախօս Սարուխանից և այլն։ Այլ և ժողովրդական և ազգային նորագոյն երգեր, գիւղատնտեսական, վիճակագրական, աշխարհագրական նոր տեղեկութիւններ։

Պատի օրացոյցի մէջ աւելացրած է ժամանակագրութիւն։

Գները՝ Ծոցինը—20 կոպ., Պատինը—50 կոպ.։ Գումարով գնողներին՝ Ծոցինը—15 կոպ., Պատինը—35 կոպ.։ Ճանապարհածախսը մեզ վրա է։

Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը կարող են ստանալ ձրի։

Դիմել՝ Александрополь, Типографія; Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian։

Ցանկացողները թող շտապեն, որ ժամանակին կարողանանք պատուէրները ճշտութեամբ կատարել։

4—17 (Ջ. Չ.) Կարապետ Ափինեան

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԾ

1904 Թ. „ԼՈՅՍ“ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

որոնք հիմնովին տարբերվում են բոլոր միւս օրացոյցներից թէ արտաքին շքեղութեամբ եւ թէ ներքին բովանդակութեամբ։

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԸ բաղկացած է 256 երեսից և զարդարված 17 գունատիպ պատկերով—(12 ամիս, ս. Էջմիածին, ս. Սահակ, ս. Մեսրոպ, Աբովեան և Ահարոնեան)։ Յաւելուածը՝ Հայրապետ. ամենայն հայոց։ Կաթողիկ. և քաղաքական համայնք։ Տօնական և հայկական անուններ։ Ժամանակը և նրա չափերը։ Չափեր։ Կովկաս. քաղաքների ազգաբնակութիւնը։ Առողջապահութիւն։ Նամակագրութիւն։ Պօստ։ Հեռագիր։ Խնայողական գանձարաններ և մարկաներ։ Երկաթուղի։ Պօստային ճանապարհներ։ Նաւագնացութիւն։ Բնակարանների հարկ։ Անցագիր։ Իրաւաբանական տեղեկութիւն։ Մուրհակ։ Տոկոս։ Օգտակար ընկերութիւններ. Ե. Թոփչեանի։ Ինչ է երազը—Բժ. Ա. Բուդաղեանի։ Բժշկարան—Բժ. Լ. Քալանթարեանի։ Ատամնաբոյժի խրատները—Ն. Կաճկաճեանի։ Ս. Էջմիածին. ս. Սահակի, Մեսրոպի, Աբովեանի և Ահարոնեանի կենսագրութիւնները։ Կաթնատնտեսական, այգեգործական և երկրագործական խորհուրդներ։ Հետաքրքրական, զուարճալիք, տնային խորհուրդներ, օգտակար գիտելիքներ, զուարճալիք և յիշատակարան։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ տախտակը յատուկ պատրաստել տուած մի շքեղ պատկեր է՝ ս. Էջմիածին, Անիի աւերակները և 12 հայ վիպասաններ։ Յաւելուածը՝ I երես—հայկական առածներ։ Նշանաւոր դէպքեր հայ կեանքից։ Ընտիր մտքեր։ Յիշատակարան։ II երես—12 պատկեր բացատրութիւններով։ Եկեղ. և ազգային տօները։ Բժշկի փոքրիկ խրատները—Բժ. Ա. Բուդաղեանի։ Խոհարարական խրատներ—Յ. Մելիք-Բախտամեանի։ Զուարճալի հատուածներ Յ. Պարոնեանի։ Փոքրիկ պատմուածքներ Ահարոնեանի, Շիրվանզադէի, Լէօի և Փափազեանի։ Բանաստեղծական փնջիկ։ Ժողովրդ. երգեր։ Թարգ. ընտիր հատուածներ։ Արձակ բանաստեղծութիւններ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ Այլ և այլք։

ԳՆԵՐԸ գրպանի օրացոյցը 20 կոպ., պատինը 50 կոպ.։ Գումարով գնողներին ձեռնտու զիջումն։

Դիմել՝ Тифлисъ. Троицкая 11. Е. Топчяну. Արտասահմանից՝ Tiflis. Troizkaia 11. E Toptschian.

ՍԵՂԱՆԻ օրացոյց հանդէսը կը վաճառուի մի քանի օրից յետոյ։

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Ноября 1903 г. Электропечатня Груз. Изд. Т-ва, В. Вельская ул.